

## Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ մարզպետն այցելեց բազմազավակ ընտանիքների

15.05.2014



ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ-ում Ընտանիքի տարի հայտարարելու եւ Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց Նոր Եղեսիա համայնքում բնակվող 2 բազմազավակ ընտանիքի: Նրանցից առաջինը 8 արու զավակ ունեցող Արփիար Մանուկյանի ընտանիքն է, երկրորդը՝ 12 երեխա ունեցող Մերուժան Աբրահամյանինը: Այս ընտանիքներն, ի դեպ ունեն բնակարանային խնդիրներ, որոնց վերանորոգման եւ կահավորման հարցերն իր վրա է վերցրել մարզպետը: Ներկայումս արդեն կազմվել են դրանց իրականացման նախահաշվային աշխատաքները:

Մարզպետի այցելությամբ օրը տոնական դարձավ ոչ միայն այս ընտանիքների, այլեւ ողջ համայնքի համար: Այցի շրջանակում ընտանիքները մարզպետի կողմից ստացան հագուստեղեն եւ սնունդ: Տանտերերը հայտնեցին իրենց գոհունակությունն ու փոխադարձ շնորհավորանքը:

Ընտանիքի միջազգային օրվա առիթով Զուլբակ համայնքում բնակարանամուտ կտրուվի Կոլոոյա Պետրոսյանի բազմազավակ ընտանիքում: Նոր բնակարանը եւս մարզպետ Սարգիս Սահակյանի նվերն է 6 որդի ունեցող այս ընտանիքին: